## 55. ՔՅՈՌՕՂԼԻՆ ՆԱՆ ԴԱ̈ՄՈ̈ՒՐՋՕՂԼԻՆ

*Մին օր Քյոռօղլին պիրում ա վըեր ծին դա̈մո̈ւրչո̈ւն քշտին նալնըլ։ Դա̈մո̈ւրչո̈ւն տղան տըեսնում ա, գյո̈ւշտո̈ւմ չի, թա հու վար վըեր ծին նալնում ա քյինա̈մ։ Հորը հըրցնում ա, թա՝ ասում ըս Քյոռօղլին խատի յա, Քյոռօղլին ինդի յա, պա մեհեռ տըեսնամ վո՞ւչ։ Հա̈րը թա՝ էտ ա տըեսեր իլի։ Տղան ասում ա.—Ցանի նա յա՞ Քյոռօղլին, թա նա յա, ես քյինամ ըմ նրա ծին կյուղանամ։*

*Մին քանի օրան հետը Դա̈մո̈ւրչօղլին քյինա̈մ ա Քյոռօղլուն երգյիրը։ Հըսնում ա հենց Քյոռօղլուն ըպըրելիս տըեղը։ Քյոռօղլուն հնգըերունքը միշտ հերթավ ծօյին յիրա̈ ղարաղօւլ ին անում։ Էտ գշերը Քյոռօղլին ար ղարաղօւլ անողը։ Դա̈մո̈ւրչօղլին վըեր մուտանում ա, Քյոռօղլին տրան հըրցընում ա, թա՝ տու հու վը՞ւս Տա թա՝ ես եկալ ըմ Քյոռօղլուն ծիյանքը կյուղանամ։ Քյոռօղլին ասում ա.—Լիհա̈ ես էլ ո̈ւրա̈ն ծառանըերան ըմ, ես էլ ըմ օղում կյուղանամ, եք բիրա̈դի նի մննենքյ, տո̈ւս օնըենքյ, ամմա մղակն ըրկաթե յա, կարել չընք նի մննըենքյ։ Դա̈մո̈ւրչօղլին թա՝ կյումըեն կտորը քա̈նդինքյ, քյինդիրավ կըպոտըենքյ, ծիքյ տանք տո̈ւս օնըենքյ։*

*Իտի յել անում ըն։ Դա̈մո̈ւրչօղլին մնամ ա տիյեր, Քյոռօղլին նի յա մննում առաչ Դորաթը կապում, Դա̈մո̈ւրչօղլին ծիքյ ա տամ, տո̈ւս օնում։ Ծոնան էլ Ղռաթն ա կապում, ինքյն էլ յիրա̈ն նըստում, Դա̈մո̈ւրչօղլին ծիքյ ա տամ, էտ էլ տո̈ւս օնում։ Միյանքը*

փչում ըն, քյինձմ։ Հղեննի Քյոռօղլին ըտրան ասում ա.—Լա՛վ, մեհեննղյ ծիյանքը տանում ընք, ախըր Քյոռօղլին հիշտեղ էլ ինի, կյիլյակյան ա ինձ քթենա, կլոխըս կտըրի, ծիյանքն ինձ տա, ետ տանըեմ ծիրանց տըեղը։ Դամուրչօղլին թա՝ չէ՛, Քյոռօղլին տրան քմակյանը տո՛ւս մին էրկու հետ թոփուզավ թխում ա, տա սայմիշ չի անում, ասում ա.—Լա՛վ, զարափաթ մի անըել։

Մին խիլլա յել վըեր քյինամ ըն, Քյոռօղլին տրան հըրցնում ա, թա տու Քյոռօղլուն հինչան ը՞ս վախում։ Դամուրչօղլին թա՝ վըեչ մին պենան էլ վախում չըմ, մենակ ասում ըն մին շատ փիս ծըկըլթոց օնըի, նրանա յըմ վախում։ Մխըըն քյինալան եռն էլ Քյոռօղլին ծիյան վըեր ա կյամ, քամակ ինգյոնմ, մինգյել մուտանում, սմար պեց թողում։ Դամուրչօղլին սմսին կարում չի տիմմնա, ծիյան վըեր ա ինգյոնմ, Քյոռօղլին ըտըեղ տրան մուտանում ա, պըկըեն չոքում, ղմման տո՛ւս օնում, վըեր մոյթըեն։ Դամուրչօղլին կլխի ա ինգյոնմ, վըեր տա Քյոռօղլին ա, ղաչանք ա անում, ասում.—Վա՛յ, եա քե մատաղ, ինձ բաղանումիլ, եա կըտըեռնամ քու ծառանըերատ մինը։

Տրանա եսը Դամուրչօղլին էլ ա Քյոռօղլուն հնգըրանում։

